ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 փետրվարի 2023 թվականի N 156 - Ն

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱ-ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ ծանրաքաշ մեքենաների կշռման համակարգի ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի կողմից «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա կազմակերպվող երկու փուլով մրցույթի ընթացակարգի՝

1) ընտրված մասնակցի կողմից ներկայացվելիք որակավորման և պայմանագրի ապահովման չափերը, ինչպես նաև կանխավճարի մարման կարգը սահմանվում և 2-րդ փուլի հրավերով նախատեսվում են գնահատող հանձնաժողովի որոշմամբ, պայմանով, որ որակավորման ապահովման չափը չի կարող պակաս լինել գնման կանխատեսվող և հրավերով սահմանված գնի հինգ, իսկ պայմանագրի ապահովման չափը՝ տասը տոկոսից: Եթե ընտրված մասնակցի գնային առաջարկը

գերազանցում է կանխատեսվող գինը, ապա սույն ենթակետով նախատեսված ապահովման չափերը հաշվարկվում են գնային առաջարկի նկատմամբ.

2) 2-րդ փուլի հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակցի կողմից ներկայացվող հայտի ապահովման չափը սահմանվում է գնման կանխատեսվող և հրավերով սահմանված գնի երեք տոկոսի չափով: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է կանխատեսվող գնի երեք տոկոսը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի երեք տոկոսին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ